№ 34 Մարտի 4 (16) 1880 Մարտի 4 (16) № 34

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Հայի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, Թիֆլիս և Հայաստան։—Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Իտալիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Խենթը։

Կ. ՊՕԼԻՍ, ԹԻՖԼԻՍ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

—

Կ. Պոլսի գործիչները կարծես խօսք են կապել այժմ ևս շարժվել այնպէս, ինչպէս շարժվեցին Լիզբոնում գաղթականութիւնը ընկելու ժամանակ։ Ինչ կը լինէր արդեօք եթէ հանգուցեալ Լազարեվը չը լինէր, Կ. Պոլսի գործիչները արդեօք կը խափանէին հեղեղը, երբ այդ գործիչները խընայում էին նաև իրանց մի հեռագրական խօսքը յուսահատված ժողովուրդը հանգստացնելու համար...էլ ուր մնաց ուրիշ միջոցներ գործ դնելը...Այդ ամենը կասի իր ժամանակին, այդ ամենը կասի իր իրաքանչիւր երզրումցին, որը վկայ է եղել այդ դէպքերին։

Աւ տեսել է ճգնաժամի մէջ պօլսեցիների այդչափ անփոյթութիւնը, կարող է նա արդեօք այժմ ևս չը թերահաւատվել նոցա վրա վանեցիների վերաբերմամբ. ճշմարտութիւնը աչք է հանում, այդ է գլխաւոր ցաւը։ Եւ այդ պատճառով երբ պօլսեցիների մասին «հոսոս» են ասում,—նրանք նեղանում են, երբ չեն ասում,—ստիպում են ասելու....

Հայց թողնենք Կ. Պոլիս. այնտեղ զբաղված են դիպլոմասիայով։ Իսկ մեր Թիֆլիսը ի՞նչ է մտածում, երբ հայկական բեմի հերոսների գլխին այնչափ փողեր է թափում, մինչդեռ Թիւրքաց Հայաստանի հողի վրա իսկական ողբերգութիւնների անթիւ հերոսները անօգնական մնացած, սովից ճանճի պէս են կոտորվում։

Հայերի գործը, կարծես, առանց անօմալիայի չէ կարող ընթանալ. նոյն ազգի անդամները մի տեղ լացում են,—իսկ միւս տեղ ծիծաղից ուշաթափ լինում, մի տեղ անօթի, սովալլուկ մեռնում են,—իսկ միւս տեղ շռայլութեան մէջ բազմած, հիացմունքով ծափահարում են. մի տեղ խոտ և փայտ են ուտում,—իսկ միւս տեղ լոկ կերածները մարսելու վրա են մտածում...

Եւ այս ազգն է ուզում ապրել...Երանի նրան, ով հաւատունի....

Դր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Վլադիկավկազ 22 փետրվարի

Ուրախ սրտով չատպում եմ հաղորդել ձեզ, որ ձեր պատուական լրագրի սերմանած սերմն, Վլադիկավկազ քաղաքում ընկաւ պարարտ հողի վրա։ Մեր քաղաքն ընկած լինելով Վրաստանը Ռուսաստանի հետ միացնող մեծ ճանապարհի վրա, իր բնակիչ հայերին ընտելացրել է առատաձեռն նուիրատուութեան։ Տարվայ մէջ սակաւ կիրակի կանցնի, որ մեր եկեղեցու մէջ մի նեղացած ճանապարհորդի համար բաւականացուցիչ դանձանակ չը ժողովի։ Ինչ ժողովարարի հետ դիմել ենք ժողովրդի օգնութեան, միշտ մեր յոյսն կրկնապատիկ է պակվել։ Վերջին տարիներումն եղած նուիրատուութիւնները սրանք են,—1877 թուականին վերջին, մի խնջոյքի մէջ, երբ երկու քահանայք՝ տանուտէր պ. Սարգիս Կիրակոսեանցի խնդրանքը, առաջարկեցինք, ժողովարարութիւն բանալ Հայաստանի գաղթականաց համար, ժողովեցինք մինչև 400 ռուբլ,—79 թիւն Ստեփանէ վարդապետն՝ իբրև ճանապարհորդ անցնելով մեր քաղաքից, մի օրվայ մէջ գումարեց 380 ռուբլ։ Ներկայ ամիս մէջ Պօղոս Լիսիցեանցի տանը նրա աղջկայ նշանադրութեան պատճառով հրաւիրված էին մեր ժողովրդից բաւական անձինք։ Ես յարմարաւոր միջոց գտնելով, համառօտաբար նկարագրեցի վանի կողմի մեր հայ արիւնակիցների սովատանջ լինելը։ Պ. Յակոբ Բաղդասարեանցն՝ չարունակեց իմ խօսքը ասելով եկէք զարդակենք մի մի բաժակ այն հայերի կենացը, որոնք չեն խնայում իրանց լումայն ձգել ազգային գանձանակի մէջ, և շատ լաւ կը լինէր եթէ մենք ևս նրանց օրինակին հետևելով, այս բոպէիս ստորագրութիւն բանայինք յօգուտ սովելոց։ Փեսահացուի հայր պ. Գրիգոր փարսադանեանցն՝ արձագանք տուեց Նրա ձայնին. ամենայն կողմից լսվում էին յօժարութեան ձայներ։ Մի ժամի մէջ 12 հոգի ստորագրեցինք 114 ռուբլի։ Երկու օրից յետոյ իմ ընկերակից քահանայ, երեցփոխ պ. Սիմէոն Օթարեանցի և Ստեփաննոս Կիրակոսեանցի ընկերակցութեամբ, չարունակեցինք ժողովարարութիւնը քաղաքում։ Հաւաքվեցաւ 464 ր. գումարը։ Ահա նուիրատուների ցուցակը։ Յակոբ Բաղդասարեանց 25 ր., Գրիգոր Լիսիցեանց 25 ր., Վարդան Տէր-Աստուածատուրեանց 25 ր., Գրիգոր փարսադանեանց 10 ր., Սիմէոն Օթարեանց 10 ր., Յովհաննէս փարսադանեանց 3 ր., Իվան Պաւլիչ Բոձիով (վրացի) 3 ր., Գրիգոր Ջաչէտեանց 1 ր., Գէորգ փարսադանեանց 5 ր. Կարապետ Տարասով 1 ր., Պօղոս Լիսիցեանցի

—Ապա ինչու քեզ չեն կծում, հարցնում է որդին։

—Կծում են, բայց ինձ այնքան չեն ցաւեցնում։

—Ինչու չեն ցաւեցնում։

—Իմ մարմինը վաղուց սովորել է նրանց խայթոցներին։

—Թող իմն էլ սովորի, ասում է պատանին ժպտելով։

Վերջինն ծիծաղում է և համբուրում է որդուն։

Նոյն միջոցին յայտնվեցաւ գիւղի գզիրը և ասաց, որ քուրդ Ֆաթթահ-բէկը մարդ է ուղարկել, թէ գալու եմ տանուտէրի մօտ հիւր, և աւելացրեց, թէ գուցէ շուտով կը գայ նա, որովհետև շատ հեռու չէ գտնվում, այլ մնձակայ լեռների վրա որս է անում։ Կարծես մի սև թուղպ անցաւ ծերունու պարզ ճակատի վրա և նրա ուրախ դէմքը նսեմացաւ տխրութեամբ։ Բայց նա զսպելով իր ներքին տհաճութիւնը, պատուիրեց գզիրին, որ դաշտից կանչէ իր որդիներից մի քանիսին, որ սպասաւորութիւն անեն, իսկ ինքը խոտի և դարմանի պատրաստութիւն տեսնէ նրանց ձիաների համար։

Ֆաթթահ-բէկի երթևեկութիւնը այնպիսի մի սովորական բան էր ծերունի խաչօի մօտ, որ տանեցիք գիտէին, թէ ինչ պատրաստութիւններ պէտք էին նրան հիւրասիրելու համար։ Այս պատճառով հէնց որ հարսները իմացան, թէ նա գալու է, իսկոյն մի քանի գառներ մորթել տուին, և սկսեցին մեծ կաթսաներով փլաւ պատրաստել, որովհետև իմանում էին, որքան էլ սակաւ լինէր, դարձեալ բէկը իր հետ մի քանի կամ եռեսուն մարդ կունենար։

Ֆաթթահ-բէկը քրդերի մի ամբողջ ցեղի պետն էր, որոնց ոչխարները արածում էին Օ... գիւղի սահմանակից լեռների վրա։ Սակաւ չէր պատահում, որ հայ և քուրդ հովիւների մէջ ծագում էին կռիւներ, երբ քրդերը կամ ոչխար էին գողանում, և կամ անցնելով սահմանից, սկսում էին իրանց հօտերը արածացնել հայերի արօտների վրա։ Բայց այդ կռիւները միշտ վերջանում էին առանց ծանր հետևանքների, որովհետև քրդերի ցեղապետ Ֆաթթահ-բէկը տանուտէր խաչօի ոչ միայն լաւ բարեկամն էր, բայց և քրիվան էր։ Նա կնքահայր էր դարձել տանուտէրի թոռներից մի քանիսին միրուութեան խորհուրդի ժամանակ, իսկ տանուտէրը փոխադարձապէս կնքահայր էր եղել բէկի մի քանի որդիներին թլփատութեան ծէսը կատարելու ժամանակ։ Այսպէսով հայ տանուտէրի և քուրդ բէկի մէջ կազմվել էր խիստ սերտ յարաբերութիւն։

Բայց ինչու նա տխրեց, երբ լսեց բէկի գալուստը։ Խաչօն ժլատ մարդ չէր, որ վախենար նրան իր մի խումբ ծառաների հետ հիւրասիրելուց։ Խաչօի սեղանը հայր Աբրահամի սեղանի նման ամեն մարդու առջև բաց էր։ Ամեն օր նրա տանը հաց էին ուտում բազմաթիւ պանդուխտներ և օտարականներ։ Խաչօն միշտ մի առանձին բաւականութեամբ էր արտասանում այն խօսքերը, թէ իր կեանքում առանց հիւրի սեղան չէ նստել։ «Հաց, ասում էր նա, Աստուծոյ տուածն է և Նրան է պատկանում. Աստուծոյ աղքատները պէտք է կերակրվին նրանից։» Բայց ինչու տխրեց նա, երբ լսեց բէկի գալուստը....

Նա լուռ մտածութեան մէջ դուրս եկաւ տնից, այնտեղ դրանը կանգնած, սպասում էր, որ ընդունէ հիւրին։ Մի քանի գիւղացիներ, տեսնելով տանուտէրին, մօտեցան նրան։

—Ասացին, բէկը գալիս է, խօսեց նրանցից մէկը.—ով գիտէ, ինչ փորացաւ կունենայ։

—Քուրդը, երբ հայի տունն է գալիս, առանց փորացաւի չէ լինում, պատասխանեց տանուտէրը ներքին դժգոհութեամբ։

Բլուրների ետևից երևացին նիզակների սուր ծայրեր, և մի քանի րոպէից յետոյ յայտնվեցան մի խումբ ձիաւորներ։

—Գալիս են, ասաց գիւղացիներից մէկը։

Տանուտէրի աչքերը հեռուից լաւ չէին տեսնում, նայեց դէպի այն կողմը և ոչինչ չը նկատեց։

—Նրանք են, ձայն տուեց մի ուրիշ գիւղացի։

—Տղերք, ասաց տանուտէրը իր մօտ կանգնած գիւղացիներին, դուք այստեղ մնացէք, նրանց ծառայում էին նրա տանը։ Դա մի ամբողջ լեգէոն էր։ Ամեն օր վառվում էին նոյն թոնիրները, ամեն օր պատրաստվում էր կերակուրների նոյն քանակութիւնը։ Եւ ծերունու ժրաջան հարսները մի րոպէ հանգստութիւն չունէին։ Պէտք էր ամենի մասին հոգ տանել, պէտք էր ամենին գոհացնել։

Բացի դրանից, կային տնտեսական և ուրիշ զանազան հոգսեր։ Ահա այնտեղ, բակում հարսներից մէկը կովերին և ոչխարներին է կթում. միւսը փոքրիկ օջախի վրա կաթ է տաքացնում մածուն չինելու համար. երրորդը պանիր է մակարդում. չորրորդը հարում է խնոցին կարագ պատրաստելու համար։ Նրանց շուրջը վազվզում են բազմաթիւ երեխաներ և խաղում են նորածին գառների ու հորթերի հետ։ Քաղցր է նայել այդ գիւղական բախտաւորութեան վրա։ Մանուկ և գառնուկ, երկուսն էլ ճռում են միասին,—երկու հաստութիւններ, որոնցմով ուրախանում է, որոնցմով պարծենում է գիւղացին։

Բակի արևահայեաց կողմում, պատի տակ, մինը միւսի վրա, կարգով շարված են մի քանի հարիւր մեղրի փեթակներ։ Ապրելեան արեգակը թափում է այստեղ իր ջերմ ճառագայթները։ Մինչդեռ հարսները միւս կողմում զբաղված են իրանց գործով, ծերունի խաչօն այստեղ բաց է անում փեթակների դռնակները։ Ճանճերը ուրախ և զուարթ դուրս են թափվում ծակերից, սաւառնում են նրա ալւոր գլխի շուրջը, պըզպըզում են, վըժվըժում են, թռթռում են, և օդը թնդում է մլիոնաւոր միջատների ձայնից։ Գոնվում են նրանց մէջ և այնպիսի չարաճճիներ, որ կծու հարձակումներ են մատուցանում ծերունու խորշոմած երեսին։ Բայց նա ամենևին ցաւ չէ զգում, միայն ձեռքով քշելով, ասում է. «Ա՛յ, չար սատանայ, ինչ վատութիւն է արել քեզ խաչօն։»

Նոյն ժամանակ Ստեփանիկը հեռու կանգնած, հետաքրքրութեամբ նայում է հոր աշխատութիւններին։

—Գնա, զաւակս, ճանճերը կը կծեն քեզ, զգուշացնում է հայրը։

—Ապա ինչու քեզ չեն կծում, հարցնում է որդին։

—Կծում են, բայց ինձ այնքան չեն ցաւեցնում։

—Ինչու չեն ցաւեցնում։

—Իմ մարմինը վաղուց սովորել է նրանց խայթոցներին։

—Թող իմն էլ սովորի, ասում է պատանին ժպտելով։

Վերջինն ծիծաղում է և համբուրում է որդուն։

Նոյն միջոցին յայտնվեցաւ գիւղի գզիրը և ասաց, որ քուրդ Ֆաթթահ-բէկը մարդ է ուղարկել, թէ գալու եմ տանուտէրի մօտ հիւր, և աւելացրեց, թէ գուցէ շուտով կը գայ նա, որովհետև շատ հեռու չէ գտնվում, այլ մնձակայ լեռների վրա որս է անում։ Կարծես մի սև թուղպ անցաւ ծերունու պարզ ճակատի վրա և նրա ուրախ դէմքը նսեմացաւ տխրութեամբ։ Բայց նա զսպելով իր ներքին տհաճութիւնը, պատուիրեց գզիրին, որ դաշտից կանչէ իր որդիներից մի քանիսին, որ սպասաւորութիւն անեն, իսկ ինքը խոտի և դարմանի պատրաստութիւն տեսնէ նրանց ձիաների համար։

Ֆաթթահ-բէկի երթևեկութիւնը այնպիսի մի սովորական բան էր ծերունի խաչօի մօտ, որ տանեցիք գիտէին, թէ ինչ պատրաստութիւններ պէտք էին նրան հիւրասիրելու համար։ Այս պատճառով հէնց որ հարսները իմացան, թէ նա գալու է, իսկոյն մի քանի գառներ մորթել տուին, և սկսեցին մեծ կաթսաներով փլաւ պատրաստել, որովհետև իմանում էին, որքան էլ սակաւ լինէր, դարձեալ բէկը իր հետ մի քանի կամ եռեսուն մարդ կունենար։

Ֆաթթահ-բէկը քրդերի մի ամբողջ ցեղի պետն էր, որոնց ոչխարները արածում էին Օ... գիւղի սահմանակից լեռների վրա։ Սակաւ չէր պատահում, որ հայ և քուրդ հովիւների մէջ ծագում էին կռիւներ, երբ քրդերը կամ ոչխար էին գողանում, և կամ անցնելով սահմանից, սկսում էին իրանց հօտերը արածացնել հայերի արօտների վրա։ Բայց այդ կռիւները միշտ վերջանում էին առանց ծանր հետևանքների, որովհետև քրդերի ցեղապետ Ֆաթթահ-բէկը տանուտէր խաչօի ոչ միայն լաւ բարեկամն էր, բայց և քրիվան էր։ Նա կնքահայր էր դարձել տանուտէրի թոռներից մի քանիսին միրուութեան խորհուրդի ժամանակ, իսկ տանուտէրը փոխադարձապէս կնքահայր էր եղել բէկի մի քանի որդիներին թլփատութեան ծէսը կատարելու ժամանակ։ Այսպէսով հայ տանուտէրի և քուրդ բէկի մէջ կազմվել էր խիստ սերտ յարաբերութիւն։

Բայց ինչու նա տխրեց, երբ լսեց բէկի գալուստը։ Խաչօն ժլատ մարդ չէր, որ վախենար նրան իր մի խումբ ծառաների հետ հիւրասիրելուց։ Խաչօի սեղանը հայր Աբրահամի սեղանի նման ամեն մարդու առջև բաց էր։ Ամեն օր նրա տանը հաց էին ուտում բազմաթիւ պանդուխտներ և օտարականներ։ Խաչօն միշտ մի առանձին բաւականութեամբ էր արտասանում այն խօսքերը, թէ իր կեանքում առանց հիւրի սեղան չէ նստել։ «Հաց, ասում էր նա, Աստուծոյ տուածն է և Նրան է պատկանում. Աստուծոյ աղքատները պէտք է կերակրվին նրանից։» Բայց ինչու տխրեց նա, երբ լսեց բէկի գալուստը....

Նա լուռ մտածութեան մէջ դուրս եկաւ տնից, այնտեղ դրանը կանգնած, սպասում էր, որ ընդունէ հիւրին։ Մի քանի գիւղացիներ, տեսնելով տանուտէրին, մօտեցան նրան։

—Ասացին, բէկը գալիս է, խօսեց նրանցից մէկը.—ով գիտէ, ինչ փորացաւ կունենայ։

—Քուրդը, երբ հայի տունն է գալիս, առանց փորացաւի չէ լինում, պատասխանեց տանուտէրը ներքին դժգոհութեամբ։

Բլուրների ետևից երևացին նիզակների սուր ծայրեր, և մի քանի րոպէից յետոյ յայտնվեցան մի խումբ ձիաւորներ։

—Գալիս են, ասաց գիւղացիներից մէկը։

Տանուտէրի աչքերը հեռուից լաւ չէին տեսնում, նայեց դէպի այն կողմը և ոչինչ չը նկատեց։

—Նրանք են, ձայն տուեց մի ուրիշ գիւղացի։

—Տղերք, ասաց տանուտէրը իր մօտ կանգնած գիւղացիներին, դուք այստեղ մնացէք, նրանց

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ Վ. ԵՐԶԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Լ.

Ապրիլ ամիսը բերեց իր հետ աւելի տաք և աւելի պայծառ օրեր։ Լեռների վրա կարմիր, դեղին և սպիտակ շուշանները վաղուց արդէն ծաղկել էին, և քրդերի աղջիկները բաղելով, փունջեր էին կապում, և հայերի գիւղերում մանածելով, փոխում էին մի կտոր հացի հետ։ Սունկը, բոխին, ծնեբէկը, մանդիկը, սիբեխը և լեռնային զանազան բանջարեղէնները այս տարի այնքան առատ էին, որ մի աւանակի բեռը քրդի կանայքը փոխում էին մի քանի ֆունտ ալիւրի հետ։

Ծերունի խաչօի որդիները արդէն սկսել էին դաշտում իրանց վարը վարել։ Աշխատութիւնը սկսվել էր ամեն տեղ։ Գիւղի մէջ մի անգործ մարդ չէր կարելի գտնել։ Ամեն ոք զբաղված էր իր մշակութիւններով։

Առաւօտեան ժամն էր։ Ծերունու տանը թոնիրները վառվում էին. մէկի վրա դրած էին պղնձէ ահագին կաթսաներ և խեցեղէն մեծ-մեծ պուկներ, կերակուր էին եփում, միւսի մէջ հաց էին թխում. Հարսները, աղախիններին, հաւաքված թոնիրների շուրջը, ընդհանուր չարժողութեան մէջ էին։ Ցունը, լցված կերակուրների անուշ հոտով, ներկայացնում էր մի հսկայական խոհանոց, որի մէջ, տեսնողը կը մտածէր, թէ պատրաստվում է ճաշ մի ամբողջ բանակ կերակրելու համար։ Եւ իրաւ, բացի ծերունու ահագին գերդաստանից, նրա սեղանից կերակրվում էին բազմաթիւ հովիւներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք